ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական բաժնի կողմից 2025թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրավաբանական բաժինն իր աշխատանքներն իրականացրել է լրիվ ծավալով, ուշացած գրություններ և հանձնարարականներ չեն եղել: Ստացել ենք 246 մտից գրություն, ի պատասխան ելք է եղել 234-ը, բաժնի կողմից գրվել է ելից 42 գրություն: Ներքին գրությունների քանակը 2607-ն է:

❖ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Բաժնի կողմից ուսումնասիրվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը, ուսումնասիրվել է մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված 319, համայնքի ղեկավարների կողմից ընդունված 1069 որոշում և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին:

❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և ներկայացվել են խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ, տրվել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների 4 քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերվել են պետական այլ մարմինների հետ հարաբերություններում դժգոհությունների, աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում առաջացած վեճերի, հարևանային իրավունքի, սեփականության իրավունքի, գույքին պատճառված վնասի, ապահովագրության վերաբերյալ, սոցիալական և բազմաբնույթ այլ խնդիրների: Դիմումներին պատասխանվել է ՀՀ օրենսդրության պահանջներից ելնելով, մի մասին տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան, իսկ մարզպետի աշխատակազմի իրավասության շրջանակից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ դիմումատուներին բացատրվել է գործող կարգը և ուղղորդվել են համապատասխան ոլորտներ:

❖ Պատրաստվել են Բաժնի գործունեությանն առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին:

❖ Ուսումնասիրվել են մակագրված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոշ դեպքերում ներկայացվել են առաջարկություններ՝ դրանցում ներառելու համար:

❖ Ամենամսյա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

❖ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

❖ Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, լրագրողների հասարակական և այլ կազմակերպությունների կողմից ուղարկված գրություններին, հարցումներին:

❖ Մարզպետի աշխատակազմին առնչվող հարցերով կազմվել են ՀՀ դատարաններ են ներկայացվել միջնորդություններ, հայցադիմումներ, բողոքներ:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
14.07.2025թ.